# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 69 - Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, օրենքի 69-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է***

Համայնքի 2011 թվականի բյուջեի հաղորդումները 01.10.2011 թվականի դրությամբ ընդունել ի գիտություն:

Հազար դրամ

| | եկամտի անվանումը | 2011 թ. | | | 2010 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տարեկան պլան | փաստացի 9 ամիս | կատարման % | տարեկան պլան | փաստացի 9 ամիս | կատարման % |
| 1 | Գույքահարկ | 8600.0 | 4983.4 | 57.95 | 8650,0 | 4800.4 | 55.5 |
| 2 | Հողի հարկ | 2700.0 | 1767.5 | 65.46 | 2800,0 | 1860.5 | 66.44 |
| 3 | Տեղական տուրքեր | 2740.0 | 1998.3 | 72.93 | 3346,0 | 2284.6 | 68.28 |
| **Ընդամենը սեփական եկամուտներ** | | **14040.0** | **8749.2** | **62.32** | **14796,0** | **8945.5** | **63.0** |
| 4 | Վարձակալություն հողի և տարածքի | 6015.0 | 4572.8 | 76.02 | 7390,0 | 5064.0 | 68.52 |
| 5 | Դոտացիա | 62795.4 | 47096.6 | 75.0 | 64643,3 | 48482.4 | 75.0 |
| 6 | Սուբվենցիա | 2384.6 | 1716.9 | 72.0 | 2185,7 | 1209.2 | 55.32 |
| 7 | Ոչ պաշտոնական Դրամաշնորհ /GTZ/ | -- | -- | -- | 1871.8 | 1868.2 | 99.0 |
| 8 | Պետական տուրքեր | 8500.0 | 4070.5 | 47.9 | 8000,0 | 4078.0 | 50.98 |
| 9 | Պետության կողմից պատվիրակված լիազորություններ | 2600.0 | 1710.9 | 65.8 | 3719,4 | 1736.3 | 46.68 |
| 10 | Այլ եկամուտներ | 12993.3 | 7911.9 | 60.89 | 11694,0 | 6781.4 | 58.0 |
| Ընդամենը | | 109328.3 | 75828.8 | 69.36 | 113700.0 | 78165.0 | 68.75 |

Հողի օտարման մուտք /Ֆոնդային/ 1492.5

2010 թ. – 2011 թ. 9 ամիսների ծախսերի կատարման հաշվետվություն

| հ/հ | Անվանումը | 2011 թ. | 2010 թ. |
|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 34521.4 | 33553.2 |
| 2 | Սոց. հատկացում | 8391.7 | 8463.9 |
| 3 | Էներգետիկ ծառայություններ | 2212.4 | 2093.2 |
| 4 | Կապի ծառայություններ | 1241.6 | 1203.0 |
| 5 | Ներկայացուցչական | 1045.0 | 1105.0 |
| 6 | Գործուղումներ | 853.0 | 524.0 |
| 7 | Գույքահարկի ավտոմատացման համակարգի սպասարկում | 119.0 | 189.0 |
| 8 | Գրասենյակային նյութեր | 836.8 | 908.3 |
| 9 | Տրանսպորտային նյութեր | 4499.6 | 4323.0 |
| 10 | Մասնագիտական ծառայություններ | 326.0 | 939.0 |
| 11 | Հատուկ նպատակային նյութեր | 385.0 | 438.8 |
| 12 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 3054.4 | 2941.0 |
| 13 | Սուբսիդիա | 5793.2 | 5691.3 |
| 14 | Այլ նպաստներ բյուջեից | 2031.0 | 2555.0 |
| 15 | Աղբահանում և ջրամատակարարում | 358.7 | 369.5 |
| 16 | Տեղեկատվական ծախսեր | 505.5 | 956.5 |
| 17 | Միջոցառումներ | 950.0 | 470.0 |
| 18 | Այլ հարկեր, տուրքեր | 84.0 | 173.8 |
| 19 | ԳԱՄԿ | 18.0 | 27.0 |
| 20 | Մեքենաների և սարքավորումների ընթ.նորոգ. | 75.0 | 50.0 |
| 21 | Սերմեր | 40.0 | 30.0 |
| 22 | ՆՀՄ և "Հույսի կամուրջ" | 510.0 | 510.0 |
| 23 | Կապիտալ ծախսեր /գազ, մեքենայինորոգում/ | 4866.3 | 4312.4 |
| 24 | Աշխատանքի ակումբի նորոգում | - | 1411.0 |
| 25 | Փողոցային լուսավորության ընթացիկ նորոգում | 200.0 | 200.0 |
| | Ընդամենը | *72917.6* | *73437.8* |
| | Աշխատավարձի և սոցի % - ը ծախսերի մեջ | 58.85% | 57.21% |

**Կողմ (10)** — **Դեմ (0)** — **Ձեռնպահ (0)**

ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՋԻԲԵԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ

ՌՈՒԲԻԿ ԳԻԺՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ

ՍԱՇԱ ԳԻԺՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ` arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 70 - Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Տեղական Ինքնակառավարման մասին„ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և 54-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է*

տալ համաձայնություն համայնքի 2011 թ բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
Համայնքի բյուջեի եկամտային մասի "Տեղական տուրքեր" 1131 տողից պակասեցնել 150.0 հազար դրամ վառելիքի մասով:
Միաժամանակ բյուջեի ծախսային մասի

1. գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածից պակասեցնել 10.0 հազար ՀՀ դրամ, 4823 հոդվածից 35.0 հազար ՀՀ դրամ, 4822 հոդվածից 5.0 հազար ՀՀ դրամ
2. գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածից պակասեցնել 70.0 հազար ՀՀ դրամ, 4822 հոդվածից 135.0 հազար ՀՀ դրամ և 4269 հոդվածից 10.0 հազար ՀՀ դրամ և ավելացնել
   2.1 գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4729 հոդված 75.0 հազար ՀՀ դրամ և 4823 հոդված 34.0 հազար ՀՀ դրամ
   2.2 գործառնական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդված 6.0 հազար ՀՀ դրամ
3. Համայնքի բյուջեի 01 բաժնի 03 խմբի 03 դասի տնտեսագիտական դասակարգման 4221 հոդվածից 40.0 հազար ՀՀ դրամ տեղափոխել գործառնական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդված:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) |
| --- | --- | --- |
| ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ | — | ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ |
| ՎԱՐԴԱՆ ԱԶԻԲԵԿՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ | | |
| ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ | | |
| ՍԱՇԱ ԳԻՇՅԱՆ | | |
| ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Յայաստանի Յանրապետության Տավուշի մարզինոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 71 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է տալ համաձայնություն*՝

1. Համայնքի սեփականություն համարվող բնակավայրի նպատակային նշանակության հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն կից ներկայացվող աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

**Կողմ (9)**
ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՋԻԲԵԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ
ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ
ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ
ՍԱՇԱ ԳԻՇՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ

**Դեմ (0)**
—

**Ձեռնպահ (1)**
ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

Բնակավայրի նշանակության հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոյեմբերյան համայնք | Երևանյան փողոց թիվ 71/2 | 0135-0128 | 0.0286 հա | բնակավայրի | - | Հասարակական կառուցապատման | 1քմ - 810 ՀՀ դրամ | - |
| 2 | Նոյեմբերյան համայնք | Կամոյի փողոց թիվ 3/7 | 0048-0001 | 0.0064 հա | բնակավայրի | - | Բնակելի կառուցապատման | 1քմ- 1000 ՀՀ դրամ | - |

Համայնքի ղեկավարի աշխատակազմի
քարտուղար Ա. Ամիրաղյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք.
Երևանյան 4. հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 72 - Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է տալ համաձայնություն՝***

1. Համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն կից ներկայացվող աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) |
|---|---|---|
| ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ | — | ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ |
| ՎԱՐԴԱՆ ԱԶԻԲԵԿՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ | | |
| ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ | | |
| ՍԱՇԱ ԳԻՇՅԱՆ | | |
| ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

## Գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոյեմբերյան համայնք | ք. Նոյեմբերյան | 0181-0018 | 0.0602 հա | Գյուղատնտեսական | Վարելահող | Վարելահող | 0.0602 հա-ի համար 30000 ՀՀ դրամ | - |
| 2 | Նոյեմբերյան համայնք | ք. Նոյեմբերյան | 0285-0026 | 0.5 հա | Գյուղատնտեսական | Վարելահող | Վարելահող | 0.5 հա ի համար 328750 ՀՀ դրամ | - |

Համայնքի ղեկավարի աշխատակազմի
քարտուղար Ա. Ամիրաղյան [signature]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք.
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 73 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ,,ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ,, ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 26.12.1997 թ. ընդունված "Տեղական տուրքերի և վճարների մասին" օրենքով և Հայաստանի Հանրապետության "Տեղական Ինքնակառավարման Մասին" օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով՝ *համայնքի ավագանին որոշում է*

Տալ համաձայնություն հաստատել Նոյեմբերյան համայնքի 2012 թ համար նախատեսված տեղական տուրքերն ու վճարները:

### *Տ Ե Ղ Ա Կ Ա Ն  Տ Ո Ւ Ր Ք Ե Ր*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

***հիմնական օբյեկտների համար՝***

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*տասնհինգ հազար դրամ*

բ/ սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*երեսուն հազար դրամ*

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*հիսուն հազար դրամ*

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*յոթանասուն հազար դրամ*

***ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝***

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*երեք հազար դրամ*

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*հինգ հազար դրամ*

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված` շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի /համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն տեղական տուրք սահմանել`

*երեք հազար դրամ*

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը` օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ` ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, "Տեղական տուրքերի և վճարների մասին" օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել`

*երեք հազար դրամ*

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրք սահմանել`

4.1. ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրք սահմանել`

*2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ*

4.2. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրք սահմանել`

*2500 /երկու* հազար հինգ հարյուր/ *դրամ*

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրք սահմանել`

*երեք հարյուր հիսուն դրամ*

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար տեղական տուրք սահմանել`

*մեկ հարյուր հիսուն հազար դրամ*

5.1. „Թանկարժեք մետաղների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան` համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար տեղական տուրք սահմանել`

*հիսուն հազար դրամ*

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝

*քսանհինգ հազար դրամ*

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝

*հիսուն հազար դրամ*

գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝

*երկու հարյուր հազար դրամ*

դ/խաղատների կազմակերպման համար՝

*հինգ հարյուր հազար դրամ*

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝

*երկու հարյուր հիսուն հազար դրամ*

*զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝*

*մեկ հարյուր հազար դրամ*

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

*հինգ հարյուր դրամ*

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

*մեկ հազար դրամ*

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

*երեք հազար դրամ*

գ/ այլ արտաքին գովազդի համար՝

*մեկ հազար դրամ*

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝

*յոթ հարյուր դրամ*

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

*հինգ հարյուր դրամ*

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

*տաս հազար դրամ*

11. Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի կայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար՝

12.

1) Յուրաքանչյուր մեկ ժամվա համար

*հարյուր դրամ*

2) Յուրաքանչյուր մեկ օրվա համար

*հինգ հարյուր դրամ*

3) Յուրաքանչյուր մեկ շաբաթվա համար

*Երկու հազար հարյուր դրամ*

4) Յուրաքանչյուր մեկ ամսվա համար

*ինը հազար դրամ*

5) Յուրաքանչյուր մեկ տարվա համար

*երեսունվեց հազար դրամ*

## 2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

*հինգ հազար դրամ*

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

*երեք հազար դրամ*

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից

ա/ մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակցության վճար սահմանել՝

*հինգ հազար դրամ*

բ/ աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակցության վճար սահմանել՝

*տաս հազար դրամ*

| Կողմ (9) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) |
|---|---|---|
| ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ | — | ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ |
| ՎԱՐԴԱՆ ԱՋԻԲԵԿՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ | | |
| ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ | | |
| ՄԱՇԱ ԳԻՇՅԱՆ | | |
| ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Յայաստանի Յանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 74 – Ն

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՅԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Տեղական Ինքնակառավարման Մասին" օրենքի 16 հոդվածի 26 կետով՝ *համայնքի ավագանին որոշում է*

Յաստատել Նոյեմբերյանի քաղաքապետարանի և նրա ենթակա հիմնարկների հաստիքացուցակները, թվաքանակները և դրույքաչափերը:

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 33:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

| Յ/Յ | Պաշտոնը | Յաստիքային միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Քաղաքապետ | 1 | 180000 |
| | *Յայեցողական պաշտոններ* | | |
| 2 | Տեղակալ | 1 | 95000 |
| 3 | Օգնական | 1 | 70000 |
| 4 | Խորհրդական | 1 | 70000 |
| | *Յամայնքային ծառայություն* | | |
| 5 | Քարտուղար | 1 | 80000 |
| | *Առանձնացված ստորաբաժանում* | | |
| 6 | ՔԿԱԳ բաժնի պետ | 1 | 88600 |
| 7 | I կարգի մասնագետ | 1 | 45000 |
| | *Աշխատակազմ* | | |
| 8 | Գլխավոր մասնագետ | 5 | 65000 |
| 13 | Առաջատար մասնագետ | 9 | 55000 |
| 22 | I կարգի մասնագետ | 4 | 45000 |
| | *Տեխսպասարկման անձնակազմ* | | |
| 26 | Վարորդ | 1 | 55000 |
| 27 | Վարորդ | 1 | 50000 |
| 28 | Յավաքարար | 3 | 32500 |
| 29 | Պահակ | 1 | 36000 |
| | *Պայմանագրային աշխատողներ* | | |
| 30 | Անասնաբույժ | 2 | 50000 |
| | ընդամենը | | 1 967 100 |

Նոյեմբերյանի քաղաքային մարզադպրոց

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 9:

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

| Հ/Հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 42500 |
| 2 | Հաշվապահ | 1 | 32500 |
| 3 | մարզիչ | 6 | 32500 |
| 4 | հավաքարար | 1 | 37500 |
| | ընդամենը | | 307500 |

Նոյեմբերյանի գեղարվեստի դպրոց

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 9:

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

| Հ/Հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 37500 |
| 2 | Հաշվապահ | 1 | 32500 |
| 3 | դասատու | 4 | 32500 |
| 4 | գործավար | 1 | 32500 |
| | խմբավար | 1 | 32500 |
| | հավաքարար | 1 | 32500 |
| | ընդամենը | | 297500 |

ՔՏՄ համայնքային հիմնարկ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 17:

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

| Հ/Հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 53000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 32500 |
| 3 | օպերատոր | 1 | 32500 |
| 4 | գանձապահ/հարկահավաք | 1 | 32500 |
| 5 | տնտեսվար | 1 | 32500 |
| 6 | Կանաչապատման ձևավորող մասնագետ | 1 | 32500 |
| 7 | բանվոր | 3 | 34500 |
| 8 | վարորդ | 3 | 32500 |
| 9 | հավաքարար | 4 | 34500 |
| 10 | պահակ | 1 | 32500 |
| | ընդամենը | | 587000 |

Նոյեմբերյանի թիվ 1 մանկապարտեզ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 11:

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

| Հ/Հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 43000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 32500 |
| 3 | դաստիարակ | 2 | 35500 |
| 4 | փոխ.դաստիարակ | 1 | 32500 |
| 5 | դաստիարակի օգնական | 2 | 32500 |
| 6 | երաժշտական դաստիրակ | 1 | 32500 |
| 7 | խոհարար | 1 | 32500 |
| 8 | տնտեսվար | 1 | 32500 |
| 9 | Այգեպան/պահակ | 1 | 32500 |
| | ընդամենը | | 374000 |

Նոյեմբերյանի թիվ 2 մանկապարտեզ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 19:

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

| Հ/Հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 43000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 32500 |
| 3 | դաստիարակ | 5 | 35500 |
| 4 | դաստիարակ | 1 | 32500 |
| 5 | դաստիարակի օգնական | 4 | 32500 |
| 6 | երաժշտական դաստիրակ | 1 | 32500 |
| 7 | ընտ. կոորդինատոր | 1 | 34500 |
| 8 | բուժքույր | 1 | 32500 |
| 9 | խոհարար | 1 | 32500 |
| 10 | խոհարարի օգնական | 1 | 32500 |
| 11 | տնտեսվար | 1 | 32500 |
| 12 | պահակ | 1 | 32500 |
| | ընդամենը | | 645000 |

Նոյեմբերյանի երաժշտական դպրոց

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 24:

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը՝

| Հ/Հ | Պաշտոնը | Հաստիքային միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 42500 |
| 2 | Հաշվապահ | 1 | 37500 |
| 3 | ուսմասվար | 1 | 37500 |
| 4 | Գործավար գանձապահ | 1 | 32500 |
| 5 | գրադարանավար | 1 | 32500 |
| 6 | դաշնամուր լարող | 1 | 32500 |
| 7 | դասատու | 13 | 32500 |
| 8 | դասատու | 3 | 42000 |
| 8 | հավաքարար | 1 | 32500 |
| 9 | պահակ, վառարան վառող | 1 | 32500 |
| | ընդամենը | | 828500 |

Կողմ (10)

ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԱՋԻԲԵԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ
ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ
ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ
ՍԱՇԱ ԳԻՇՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ
ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ

Դեմ (0)

—

Ձեռնպահ (0)

—

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 75 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՐԱ ԵՎ ՄԱՐԻԱՄ ԳՈՒԼՔԱՆՅԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 23.07. 2003 թ 983-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Դիմել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ բնակարանային հերթի համար Արա և Մարիամ Գուլքանյաններին վերցնել կենտրոնացված հաշվառման:

| **Կողմ (10)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ | — | — |
| ՎԱՐԴԱՆ ԱՋԻԲԵԿՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ | | |
| ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ | | |
| ՄԱՇԱ ԳԻՇՅԱՆ | | |
| ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 76 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԲԱԶԱՅՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Գույքահարկի մասին,, օրենքի 15-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***
Տալ համաձայնություն՝ զիջել Անահիտ Հովհաննիսյանի անվամբ գրանցված շինության նկատմամբ առաջացած գույքահարկի գծով 88129 ՀՀ դրամ գումարը:

Կողմ (10)

ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱԶԻԲԵԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ

ՍԱՇԱ ԳԻՇՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱԲԱԶՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ

ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ

Դեմ (0)

—

Ձեռնպահ (0)

—

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք.
Երևանյան 4. հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ armineno y@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 77 - Ա

## “ՋՆՄԻ-ԱԼՖԱ” ՓԲԸ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Տալ համաձայնություն Նոյեմբերյանի քաղաքապետարանի վարչական շենքի 1-ին հարկի թիվ 4 սենյակը՝ 12.24 քմ, վարձակալական հիմունքներով տրամադրել “ՋՆՄԻ-ԱԼՖԱ” ՓԲԸ-ին, ամսական 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ վարձավճարով, 10 /տաս/ տարի ժամկետով:

| Կողմ (10) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ | — | — |
| ՎԱՐԴԱՆ ԱՋԻԲԵԿՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ | | |
| ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ | | |
| ՍԱՇԱ ԳԻՇՅԱՆ | | |
| ԿԱՐԵՆ ԱԲԱՁՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք.
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ` arminenoy@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 78 - Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՕԿՋ_ՆԵՐԸ "ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ" ՓԲԸ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107 հոդվածով ***համայնքի ավագանին որոշում է.***

Տալ համաձայնություն Նոյեմբերյանի ՕԿՋ-ները /թվով 4 հատ/ ժամանակավորապես թողնել "Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ հաշվեկշռում:

| Կողմ (10) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ | — | — |
| ՎԱՐԴԱՆ ԱՋԻԲԵԿՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ | | |
| ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ | | |
| ՍԱՇԱ ԳԻՇՅԱՆ | | |
| ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ arminenoy@mail.ru


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » նոյեմբերի 2011 թվականի N 79 - Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.03.2010 Թ. ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ԹԻՎ 29-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Իրավական ակտերի մասին" օրենքի 75 հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Տալ համաձայնություն Նոյեմբերյան համայնքի ավագանու 24.03.2010 թ. թիվ 3 նիստի թիվ 29-Ա որոշման առաջին կետը համարել չեղյալ:

| **Կողմ (10)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ | — | — |
| ՎԱՐԴԱՆ ԱՋԻԲԵԿՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՆԱՆՅԱՆ | | |
| ՄԽԻԹԱՐ ԽԱՉԻԿՅԱՆ | | |
| ՍԱՇԱ ԳԻՇՅԱՆ | | |
| ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԱՄԻՐԱՂՅԱՆ | | |
| ՌՈՒԲԻԿ ԳԻՇՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ